«UOU մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվությունների
միջազգային ստանդարտներին համապատասխան՝
Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Գործունեության մասին հաշվետվություն 2
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Ընդհանուր տեղեկություններ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և նրա գործունեության մասին 5
2 Հիմնադրամի գործառնական միջավայրը 6
3 Պատրաստման հիմքը 6
4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ 7
5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին 8
6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ 12
7 Հիմնական միջոցներ 13
8 Ոչ նյութական ակտիվներ 15
9 Պաշարներ 15
10 Տրամադրված կանխավճարներ 15
11 Բանկերում պահվող ավանդներ 16
12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 16
13 Հավատարմագրային ֆոնդում պահվող միջոցներ 17
14 Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ 18
15 Ստացված շնորհներ 19
16 Պարտավորություններ շահառուների նկատմամբ 20
17 Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ 21
18 Եկամուտ նվիրատվություններից 21
19 Ծրագրի/նախագծի ծախսեր 21
20 Վարչական ծախսեր 22
21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ 22
22 Ֆինանսական ռիսկերի կառավարում 22
23 Իրական արժեքի բացահայտումներ 24
24 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ 25
25 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 25

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի տնօրինությանը և հոգաբարձուների խորհրդին.

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական վիճակն առ 2023թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև Հիմնադրամի՝ այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների(այսուհետ՝ «ՖՀՄՍ-ներ»):

Աուդիտի առարկան

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

1. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.
2. այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը.
3. այդ ամսաթվին ավարտված տարվա զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը.
4. այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
5. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիրք») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ ՀԷՄՍԽ Վարքագրքին համապատասխան:

ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա ՍՊԸ
Հայաստան, ք.Երևան, Վազգեն Սարգսյան 2, ԿԱՄԱՐ բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ. (+374 10) 51 21 51, Ֆաքս. (+ 374 10) 52 10 00, www.pwc.com/am

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման, համապատասխան դեպքերում՝ անընդհատության հետ կապված հարցերի բացահայտման և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունների պատրաստման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, դադարեցնել գործունեությունը կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների կողմից այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի շրջանակներում, մենք աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն, մենք.

- Որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում՝ մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի բարձր է սխալի հետևանքով առաջացածի համեմատ, քանի որ խարդախությունը կարող է ներառել դավադրություն, կեղծիք, դիտավորյալ բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության շրջանցում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի գործունեության անընդհատությունը պահպանելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ն.

Նինո Կարապետյան
Տնօրեն

10 հուլիսի 2024թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

PricewaterhouseCoopers Armenia LLC

«ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	813,630	832,787
Ոչ նյութական ակտիվներ	8	10,991	2,661
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**824,621**	**835,448**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	16,866	19,607
Տրամադրված կանխավճարներ	10	13,126	39,409
Բանկերում պահվող ավանդներ	11	40,479	55,100
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	237,437	384,215
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**307,908**	**498,331**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**1,132,529**	**1,333,779**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հավատարմագրային ֆոնդում պահվող միջոցներ	13	22,158	24,729
Հետաձխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	14	130,347	147,564
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**152,505**	**172,294**
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված շնորհներ	15	98,004	234,997
Հավատարմագրային ֆոնդում պահվող միջոցներ	13	25,071	33,666
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		5,230	4,177
Պարտավորություններ շահառուների նկատմամբ	16	11,583	16,456
Հետաձխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	14	17,298	14,691
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	17	49,445	37,101
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**206,631**	**341,088**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**359,136**	**513,382**
ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Կուտակված արդյունք		773,393	820,397
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		**1,132,529**	**1,333,779**

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2024թ. հուլիսի 10-ին:

Սպարտակ Սարգսյան
Ազգային տնօրեն

Լիլիթ Ասատրյան
Ֆինանսական բաժնի ղեկավար

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**2023թ.**	**2022թ.**
Եկամուտ			
Եկամուտ նվիրատվություններից	18	2,094,891	2,424,960
Այլ եկամուտ		6,939	6,435
Տոկոսային եկամուտ		2,280	1,062
Ընդամենը եկամուտ		**2,104,110**	**2,432,457**
Ծախսեր			
Ծրագրի/նախագծի ծախսեր	19	(1,815,110)	(1,939,085)
Վարչական ծախսեր	20	(348,189)	(362,582)
Տոկոսային ծախսեր	14	(14,738)	(13,681)
Արտարժույթի առքուվաճառքից ծախսեր		14,255	(37,072)
Արտարժույթի փոխարժեքից զուտ (վնասներ)/օգուտներ		(870)	18,157
Ընդամենը ծախսեր		**(2,164,652)**	**(2,334,263)**
Տարվա արդյունք		**(60,542)**	**98,194**
Այլ համապարփակ եկամուտ			
Ակտուարային օգուտ	14	13,538	11,515
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ (ՎՆԱՍ)/ԵԿԱՄՈՒՏ		**(47,004)**	**109,709**

Հազ. ՀՀ դրամ	**Կուտակված արդյունք**
Առ 1 հունվարի 2022թ.	**710,688**
Տարվա արդյունք	98,194
Ակտուարային օգուտ	11,515
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	**820,397**
Տարվա արդյունք	(60,542)
Ակտուարային օգուտ	13,538
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	**773,393**

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք մինչև հարկումը	(60,542)	98,194
Ճշգրտումներ.		
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	122,345	128,844
Տոկոսային եկամուտ	(2,280)	(1,062)
Տոկոսային ծախս	14,738	13,681
Փոխարժեքային տարբերություններ	870	(18,157)
	75,131	**221,500**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալի ճշգրտումները		
Տրամադրված կանխավճարների (աճ)/նվազում	26,283	(7,903)
Պաշարների (աճ)	2,741	17,419
Կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում).	(156,755)	35,479
	(52,600)	**266,495**
Փոփոխություններ շրջանառու կապիտալում		
Ստացված տոկոսային եկամուտ	2,280	1,062
Գործառնական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**(50,320)**	**267,557**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(102,746)	(74,562)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(8,772)	
Ավանդի մարում	15,743	-
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(95,775)**	**(74,562)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	**-**	**-**
Դրամական միջոցների և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	**(146,095)**	**192,995**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(683)	17,432
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**384,215**	**173,788**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**237,437**	**384,215**

1 Ընդհանուր տեղեկություններ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և նրա գործունեության մասին

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան, «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար (այսուհետ՝ «Հիմնադրամ»): Հիմնադրամը հասարակական, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում գրանցման համարը՝ N 222.160.00131, գրանցման հասցեն՝ Հ. Քոչարի փ. 8, բն. 18-19, Երևան, Հայաստան:

Հիմնական գործունեությունը. Հիմնադրամի նպատակն է օգնել, աջակցել և հոգ տանել լքված և կարիքավոր երեխաների մասին՝ կառուցելով մանկական գյուղեր, սոցիալական կենտրոններ: Հիմնադրամի եկամտի հիմնական աղբյուրներն են «SOS-Kinderdorf International»-ի և այլ կազմակերպությունների նվիրատվությունները, հովանավորությունները և բնեղեն նպաստները:

Հայաստանի Հանրապետությունում Հիմնադրամն իր գործունեությունն սկսել է 1988թ. Սպիտակի կործանարար երկրաշարժից անմիջապես հետո: Հիմնադրամը երեխայակենտրոն կազմակերպություն է, որի առաքելությունն է ապահովել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների խնամքը՝ ընտանիքին մոտ պայմաններում: Ելնելով դրանից հիմնադրամն իր գործունեությունը ծավալում է երկու ուղղություններով՝ այլընտրանքային խնամքի ծառայություններ, ինչպես նաև ընտանիքների ամրապնդման ծառայություն՝ սոցիալական ծանր վիճակում գտնվող, անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին:

ՀՀ Կոտայքի մարզում 1990թ. ՍՕՍ Մանկական Գյուղ Կոտայքը բացեց իր դռներն այն երեխաների համար, ովքեր 1988թ. երկրաշարժի հետևանքով կորցրել էին իրենց ծնողներին: 1994թ. կառուցվեց ՍՕՍ Մանկապարտեզը, որի նպատակն էր ապահովել որակյալ նախադպրոցական կրթություն ՍՕՍ Մանկական Գյուղ Կոտայքի, ինչպես նաև հարակից համայնքների երեխաների համար: 2001թ. Երևանում հիմնադրվեց առաջին Երիտասարդական տունը, իսկ հետագա տարիների ընթացքում հիմնադրվեցին ևս երկու Երիտասարդական տներ, որտեղ խնամվում են Մանկական գյուղերից Երևան տեղափոխված 13-18 տարեկան երիտասարդները: ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքում 2009թ. բացվեց երկրորդ ՍՕՍ Մանկական Գյուղ Իջևանը:

Այժմ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը գործունեություն է իրականացնում ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզերում, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքներում՝ երեխաների շուրջօրյա խնամքի (կարճաժամկետ և երկարաժամկետ), Մոր և Մանկան կացարանի, ընտանիքների ամրապնդման ծրագրերի, ինչպես նաև ճգնաժամային արձագանքման ծրագրերի միջոցով: «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերն ուղղված են Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության համակարգի բարելավմանը, ինչպես նաև երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմանը:

2022-2023թթ. ընթացքում հիմնադրամն ունեցել է հետևյալ մշտական և ժամանակավոր կառուցվածքային միավորները.

<u>Մշտական կառուցվածքային միավորներ.</u>

Ծրագրային գրասենյակների գործունեության տարածքները հետևյալն են.

1. Երկու մանկական գյուղ (որտեղ բնակվում են 3-18 տարեկան երեխաներ և երիտասարդներ)՝ Կոտայք գյուղում և Իջևան քաղաքում:
2. Երկու Երիտասարդական տներ (I-II) (որտեղ բնակվում են 14-18 տարեկան երեխաներ) և կիսաանկախ բնակության փուլում գտնվող շահառուների համար նախատեսված երկու ծրագիր (18 տարեկանից բարձր ՍՕՍ-երիտասարդների համար, ովքեր աջակցություն են ստանում 2-5 տարվա ընթացքում):
3. Ընտանիքների Ամրապնդման (ԸԱ) չորս ծրագրեր՝ Երևանի Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր շրջաններում, Իջևանում և Կոտայքի մարզում:

1 Ընդհանուր տեղեկություններ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և նրա գործունեության մասին (շարունակություն)

Ժամանակավոր կառուցվածքային միավորներ.

1. Ընտանիքների Ամրապնդման շրջիկ Ծրագիր Տավուշի մարզում,
2. Երևանի սիրիահայ ընտանիքների սոցիալ-տնտեսական ինտեգրում,
3. Համակարգային խնդիրների վերհանում, աջակցություն երեխաների պաշտպանության ոլորտին Ալբանիայում, Հայաստանում, Բելառուսում, Հյուսիսային Մակեդոնիայում և Ուկրաինայում,
4. Արտ-թերապիա Իջևանի և Կոտայքի խոցելի երեխաների համար
5. Արտակարգ իրավիճակների արձագանքման ծրագիր (01.11.2023-31.12.2023)

2 Հիմնադրամի գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ունենալ տարաբնույթ մեկնաբանումներ: Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցների հոսքերը: Հետևաբար, տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ ոլորտների վրա:

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև. Ընդհանուր առմամբ, ակնկալվում է, որ պատերազմը համատարած ազդեցություն կունենա համաշխարհային տնտեսության վրա, օրինակ՝ ապրանքների գների աճի, նավթի/գազի/ածխի հնարավոր պակասի, գործունեության ընդհատումների և այլնի միջոցով: Այնուամենայնիվ, Հիմնադրամը անմիջականորեն չի առնչվում պատերազմից տուժած տարածքներին: Ներկայիս տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ընթացիկ ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքից:

3 Պատրաստման հիմքը

Պատրաստման հիմքը. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով: Սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջվում են հաշվապահական հաշվառման էական գնահատումներ: Բացի այդ, Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ Հիմնադրամի ղեկավարությանն անհրաժեշտ է առաջնորդվել իր դատողություններով: Այն ոլորտները, որոնք ենթադրում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

Անընդհատության հիմունք. Ղեկավարության կողմից սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

Արտարժույթի փոխարկում. Հիմնադրամի գործառնական արժույթը Հիմնադրամի հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Հիմնադրամի գործառնական արժույթը Հայաստանի Հանրապետության («ՀՀ») ազգային արժույթն է: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով («ՀՀ դրամ»): ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացվել է առավել մոտ հազարական մեծությամբ:

3 Պատրաստման հիմքը (շարունակություն)

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս գործառնական արժույթից տարբեր արժույթներով գործարքները հաշվառվում են գործարքների ամսաթվերի համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքներով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար՝ 404.79 ՀՀ դրամ, 1 եվրո՝ 447.79 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 1 ԱՄՆ դոլար՝ 393.57 ՀՀ դրամ և 1 եվրո՝ 420.06 ՀՀ դրամ): Ոչ դրամական հոդվածները չեն փոխարկվում և չափվում են սկզբնական արժեքով (փոխարկվում են՝ օգտագործելով գործարքի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքները): Դրամական հոդվածների մարման և փոխարկման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները ներառվում են տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում:

Հարկեր. Հիմնադրամի կողմից ստացված նվիրատվությունները Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն չեն համարվում հարկվող եկամուտ: Այդ իսկ պատճառով հիմնադրամը չի ճանաչել շահութահարկի գծով ծախս: Հայաստանի Հանրապետությունում ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը հիմնականում ազատված է ԱԱՀ-ից: Հայաստանի Հանրապետությունում բարեգործական կազմակերպությունները կարող են ազատվել ԱԱՀ-ից միայն իրենց ծրագրերը կառավարության լիազոր մարմին ներկայացնելով: Կառավարության կողմից ծրագրերը բարեգործական համարվելու դեպքում այդ ծրագրի շրջանակներում Հիմնադրամին ապրանքների և ծառայությունների մատակարարումն իրականացվում է առանց ԱԱՀ-ի:

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո սույն ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխության համար պահանջվում է Ազգային տնօրենի և ֆինանսական բաժնի ղեկավարի հաստատումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է հաշվապահական հաշվառման գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատումներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Մասնագիտական դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կստացվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Ղեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները Հիմնադրամի համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:
Եթե ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ղեկավարության կողմից գնահատված ժամկետներից տարբերվեին 10%-ով, մաշվածության գծով ծախսը կաճեր/կնվազեր 12,181 հազ. ՀՀ դրամով 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (2022թ. կաճեր/կնվազեր 12,758 հազ. ՀՀ դրամով):

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Հետաշխատանքային նպաստների պարտավորությունների գնահատում.

Հիմնադրամն իրականացրել է հետաշխատանքային հատուցումների պլանների գնահատում հետևյալ ենթադրությունների հիման վրա.

- ՍՕՍ-մայրերի կյանքի բարձր տևողության հավանականությունն ավելի շատ է, քան մյուս իգական սեռի բնակչության դեպքում՝ 1%-ից մինչև 10% (տարբեր տարիքների համար)
- Ձեղչման գործակիցը ընդունվում է միջնաժամկետ պետական արժեթղթերի եկամտաբերության չափով:
- Մայրերի համար հիմնադրամից հեռանալու այլ պատճառ չկա, բացի մահվան վրա հասնելը նախքան թոշակի անցնելու տարիքը:
- Պետական կենսաթոշակային նպաստները կշարունակեն աճել.
- Աշխատավարձը կշարունակի աճել՝ համաձայն Հիմնադրամի ներքին հատուցման համակարգի, որի հիմնական բաղադրիչներն են՝ գնաճի ցուցանիշը և հիմնադրամում աշխատանքային ստաժի տևողությունը:

Հիմնական միջոցների գնահատում արժեզրկման տեսանկյունից:

Հիմնադրամն իրականացրել է հիմնական միջոցների արժեզրկման գնահատում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Արժեզրկման գնահատման համար կիրառվել է «Իրական արժեքը՝ հանած վաճառքի արժեքը», քանի որ Հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է և նրա ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում չեն առաջացնում օգտագործումից դրամական միջոցների հոսքեր: Իրական արժեքը՝ հանած վաճառքի գծով ծախսերը բացահայտելու նպատակով Հիմնադրամը հայտնաբերել է շուկայում համադրելի օբյեկտներ և վաճառողի և գնորդի միջև բանակցություններում կիրառել է զեղչ բաց աղբյուրներում հայտնաբերված գների նկատմամբ: Համադրելի ապրանքների գների այլ ճշգրտումներ կիրառվել են նաև այն դեպքում, եթե օբյեկտների չափերը էականորեն տարբերվում են, և այլ դեպքերում: Արդյունքում, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկում չի հայտնաբերվել:

Այնուհետև, Հիմնադրամը իրականացրել է հիմնական միջոցների 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման ցուցանիշների վերլուծություն և եզրակացրել, որ ոչ շարժական ակտիվների էական հավելումների բացակայության, ՀՀ տնտեսության աճի, ինչպես նաև անշարժ գույքի շուկայի կայունության և աճի պատճառով, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման ցուցանիշներ չկան:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հետևյալ նոր ստանդարտները և փոփոխությունները.

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի էական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ էական տեղեկատվությունը:

Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարեցնի հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխությանն օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Էականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ էականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ:

Փոփոխությունները ազդեցություն են ունեցել Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վրա, սակայն ոչ Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված որևէ միավորի չափման, ճանաչման կամ ներկայացման վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները:

Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները հստակեցնում են հետաձգված հարկի հաշվառման եղանակները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապագործարկման պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ: Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում Շահութահարկ. Միջազգային հարկային բարեփոխում – Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոններ (հրապարակված է 2023թ. մայիսի 23-ին): 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-ի նեղ շրջանակի փոփոխությունները: Այս փոփոխությունները կատարվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից միջազգային հարկային բարեփոխումների արդյունքում հրապարակված Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների առաջիկայում սպասվող ներդրմանը նախապատրաստվելու համար: Փոփոխությունները ժամանակավոր բացառություն են սահմանում Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների կիրառումն ապահովելու համար ընդունված կամ ըստ էության ընդունված հարկային օրենքներից բխող հետաձգված հարկերի ճանաչման և բացահայտման պահանջի գծով: Համաձայն ՀՀՄՍԽ-ի կողմից սահմանված՝ ուժի մեջ մտնելու ամսաթվի, ընկերությունները կարող են բացառությունը կիրառել անմիջապես, սակայն բացահայտման պահանջները կկիրառվեն 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» (թողարկվել է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը: Սա ներդրողների համար դժվարեցնում էր համեմատումը և համադրումը այլ առումներով նմանատիպ ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների հետ: ՖՀՄՍ17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա): Ապահովագրողները կարտացոլեն ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահութաբեր, Հիմնադրամը անմիջապես ճանաչում է վնաս:

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 17-ի ութ ոլորտներին, և դրանք նախատեսված չեն ստանդարտի հիմնարար սկզբունքները փոխելու համար: ՖՀՄՍ 17-ում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- *Ուժի մեջ մտնելու ամսաթիվ.* ՖՀՄՍ 17-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է երկու տարով: Ստանդարտը պետք է կիրառվի 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 4-ով սահմանված՝ ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակավոր արտոնությունը նույնպես հետաձգվել է մինչև 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաններ:
- *Ապահովագրության ձեռքբերման դրամական հոսքերի ակնկալվող փոխհատուցում.* Կազմակերպություններից պահանջվում է իրենց ձեռքբերման ծախսերի մի մասը դասակարգել համապատասխան պայմանագրերին, որոնց համար ակնկալվում է երկարաձգում, և այդ ծախսերը ճանաչել որպես ակտիվներ, քանի դեռ կազմակերպությունը չի ճանաչել պայմանագրի երկարաձգման ժամկետը: Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատել ակտիվի վերականգնման հավանականությունը և կոնկրետ ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
- *Ներդրումային ծառայություններին վերագրվող պայմանագրային ծառայությունների մարժա.* Ծածկույթի տարրերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով հատույցների ծավալը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի և ներդրումային ծառայությունների ակնկալվող ժամկետը՝ փոփոխական վճարներ նախատեսող պայմանագրերի և այլ՝ ընդհանուր մոդելի ներքո ներդրումային եկամուտների ստացում նախատեսող ծառայությունների պայմանագրերի համար: Ներդրումային գործունեության գծով ծախսերը պետք է ներառվեն որպես դրամական միջոցների հոսքեր ապահովագրության պայմանագրի շրջանակներում, երբ կազմակերպությունը նման գործողությունները ձեռնարկում է ապահովագրողի համար ապահովագրության ծածկույթից ստացվող օգուտները մեծացնելու նպատակով:
- *Ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր. վնասների վերականգնում.* Երբ կազմակերպությունը վնաս է ճանաչում սկզբնական ճանաչման պահին հիմնական ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի գծով, կամ խմբում անբարենպաստ բազային ապահովագրության պայմանագրեր ներառելու արդյունքում, կազմակերպությունը պետք է ճշգրտի ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի պայմանագրային ծառայությունների գծով մարժան և ճանաչի այդ վերաապահովագրության պայմանագրերի գծով շահույթ: Վերաապահովագրության պայմանագրով վերականգնված վնասի չափը հաշվարկվում է՝ բազային ապահովագրության պայմանագրերով ճանաչված վնասը բազմապատկելով բազային ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսին, որը կազմակերպությունն ակնկալում է վերականգնել ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրով: Այս պահանջը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ձեռք բերված վերաապահովագրության պայմանագիրը ճանաչվի նախքան բազային ապահովագրության պայմանագրերի գծով վնասի ճանաչումը, կամ վերջինիս հետ միաժամանակ:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

- *Այլ փոփոխություններ.* Այլ փոփոխություններով նախատեսվում են գործողության շրջանակից բացառություններ վարկային քարտերի որոշ պայմանագրերի (կամ նմանատիպ պայմանագրերի) և որոշ վարկային պայմանագրերի համար: Սահմանվում է նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ապահովագրության պայմանագրերով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ներկայացում պորտֆելներում՝ խմբերի փոխարեն: Նախատեսվում է ռիսկերի մեղմացման տարբերակի կիրառելիություն այն դեպքում, երբ ֆինանսական ռիսկերի մեղմացման նպատակով գործադրվում են ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ: Նախատեսվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն՝ ՖՀՄՍ 17-ի կիրառմամբ նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական գնահատումներում փոփոխությունների համար: Նախատեսվում է կոնկրետ ապահովագրողին վերագրվող շահութահարկի վճարների և մուտքերի ներառում պայմանագրերի կատարման դրամական հոսքերում, ըստ ապահովագրության պայմանագրի, ընտրված անցումային արտոնություններ և այլ աննշան փոփոխություններ:

ՖՀՄՍ 17-ը կիրառող ապահովագրողների համար անցումային պահանջների կիրառման ընտրության հնարավորություն. Փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում (թողարկվել է 2021թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ 17-ի անցումային պահանջների փոփոխությունը ապահովագրողներին հնարավորություն է տալիս բարելավելու ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման վերաբերյալ տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Փոփոխությունը վերաբերում է միայն ապահովագրողների կողմից ՖՀՄՍ 17-ին անցմանը և չի ազդում ՖՀՄՍ17 -ի որևէ այլ պահանջի վրա: ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի անցումային պահանջները կիրառվում են տարբեր ամսաթվերով, և կհանգեցնեն դասակարգման հետևյալ միանգամյա տարբերություններին ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ ներկայացված համեմատական տեղեկատվության մեջ. հաշվապահական հաշվառման անհամապատասխանություններ ապահովագրական պայմանագրի գծով ընթացիկ արժեքով չափվող պարտավորությունների և ամորտիզացված արժեքով չափվող որևէ հարակից ֆինանսական ակտիվների միջև, և եթե կազմակերպությունը որոշում է վերաներկայացնել ՖՀՄՍ 9-ի նպատակներով համեմատական տեղեկատվությունը, ապա՝ դասակարգման տարբերություններ համեմատական ժամանակաշրջանում ապաճանաչված ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը չի կիրառվում) և այլ ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը կիրառվում է) միջև: Փոփոխությունը կօգնի ապահովագրողներին խուսափել այդ ժամանակավոր հաշվապահական անհամապատասխանություններից և, հետևաբար, կբարելավի համեմատական տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Դա տեղի է ունենում ապահովագրողներին ֆինանսական ակտիվների վերաբերյալ համեմատական տեղեկատվության ներկայացման տարբերակների հնարավորություն տրամադրելու միջոցով: ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ կազմակերպություններին, համեմատական տեղեկատվության ներկայացման առումով թույլատրվում է կիրառել դասակարգման ծածկույթ այն ֆինանսական ակտիվի նկատմամբ, որի համար կազմակերպությունը չի վերաներկայացնում ՖՀՄՍ 9-ի նպատակով համեմատական տեղեկատվությունը:

Անցումային տարբերակը հասանելի կլինի գործիք առ գործիք՝ թույլ տալով կազմակերպությանը ներկայացնել համեմատական տեղեկատվությունն այնպես, ինչպես եթե ՖՀՄՍ 9-ի դասակարգման և չափման պահանջները կիրառվեին այդ ֆինանսական ակտիվի նկատմամբ, բայց չպահանջելով, որ կազմակերպությունը կիրառի ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները. և ֆինանսական ակտիվի նկատմամբ դասակարգման ծածկույթը կիրառող կազմակերպությունից կպահանջվի օգտագործել անցումային ամսաթվի դրությամբ հասանելի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվությունը՝ որոշելու, թե ինչպես է կազմակերպությունն ակնկալում դասակարգել այդ ֆինանսական ակտիվը ՖՀՄՍ 9 կիրառմամբ:

Փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն չի ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2024թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Հիմնադրամի կողմից:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: 2022թ. հոկտեմբերի փոփոխությունը սահմանեց, որ վարկային պայմանագրերը, որոնք պետք է կատարվեն հաշվետու ամսաթվից հետո, չեն ազդում հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքի՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա : Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք: Հիմնադրամը չի ակնկալում, որ այս փոփոխության ազդեցությունը կլինի էական:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՖՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (Թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին): Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում՝ պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Այս փոփոխություններով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի մատակարարների այն ֆինանսական պայմանագրերը, որոնք ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն կտան գնահատել այդ պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա և կազմակերպության իրացվելիության ռիսկի վրա: Լրացուցիչ բացահայտման պահանջների նպատակն է բարձրացնել մատակարարների ֆինանսական պայմանագրերի թափանցիկությունը: Փոփոխությունները չեն ազդում ճանաչման կամ չափման սկզբունքների վրա, այլ միայն բացահայտման պահանջների վրա: Բացահայտման նոր պահանջները կգործեն 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Հիմնադրամը չի ակնկալում, որ այս փոփոխության ազդեցությունը կլինի էական:

«Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍԽ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: Հիմնադրամը չի ակնկալում, որ այս փոփոխության ազդեցությունը կլինի էական:

Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարձակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, նույնիսկ եթե պարտավորության էությունը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից: Հիմնադրամը չի ակնկալում, որ այս փոփոխության ազդեցությունը կլինի էական:

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխանակելիության բացակայություն» (թողարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին): Փոփոխությունների նպատակն է՝ ապահովել հաշվապահական հաշվառման պահանջներն այն դեպքում, երբ արտարժույթը չի կարող փոխանակվել այլ արժույթով: Պահանջները ներառում են արժույթի փոխանակելիությունը որոշելու համար հետևողական մեթոդի կիրառում, և փոխանակելիության դեպքում՝ համապատասխան փոխարժեքի սահմանում: Այն նաև ներկայացնում է հարակից բացահայտումներ: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2025թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարիների համար: Թույլ է տրվում դրանց վաղաժամկետ կիրառումը:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներ Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը, եթե վերջինս պահանջվում է: Հիմնական միջոցները ներառում են հետագայում որպես հիմնական միջոց օգտագործման նպատակով կառուցվող ակտիվները:

Մաշվածություն Հողի համար մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Տիպ	Օգտակար ծառայության ժամկետներ
Շենքեր	20 տարի
Փոխադրամիջոցներ	5-8 տարի
Սարքավորումներ և կցամասեր	2-5 տարի
Այլ	5 տարի

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

7 Հիմնական միջոցներ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Հող և շենքեր	Կահույք	Սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Այլ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի 2022թ.	1,259,561	129,191	318,704	210,573	3,022	21,453	**1,942,504**
Կուտակված մաշվածություն	(593,135)	(90,076)	(260,300)	(112,481)	(712)	-	**(1,056,704)**
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2022թ.	**666,426**	**39,115**	**58,404**	**98,092**	**2,310**	**21,453**	**885,800**
Լրացումներ	7,503	7,700	42,235	-	-	17,124	**74,562**
Մաշվածության գծով ծախս	(62,244)	(11,754)	(34,557)	(19,020)	-	-	**(127,575)**
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի 2022թ.	1,267,064	136,891	360,939	210,573	3,022	38,577	**2,017,066**
Կուտակված մաշվածություն առ 31 դեկտեմբերի 2022թ.	(655,379)	(101,830)	(294,857)	(131,501)	(712)	-	**(1,184,279)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**611,685**	**35,061**	**66,082**	**79,072**	**2,310**	**38,577**	**832,787**
Լրացումներ	88,497	5,116	8,843	288	-	-	**102,744**
Փոխանցում	-	-	38,577	-	-	(38,577)	**-**
Մաշվածության գծով ծախս	(58,299)	(12,700)	(32,310)	(18,594)	-	-	**(121,903)**
Սկզբնական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	1,355,561	142,007	408,359	210,861	3,022	-	**2,119,810**
Կուտակված մաշվածություն առ 31 դեկտեմբերի 2023թ.	(713,678)	(114,530)	(327,167)	(150,095)	(712)	-	**(1,306,182)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**641,883**	**27,477**	**81,192**	**60,766**	**2,310**	**-**	**813,630**

8 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ Հիմնադրամի ոչ նյութական ակտիվները ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հիմնականում ներառում են կապիտալացված համակարգչային ծրագրային ապահովումը և լիցենզիաները: Ձեռք բերված համակարգչային ծրագրակազմի լիցենզիաները կապիտալացվում են՝ հիմք ընդունելով դրանց ձեռքբերման և օգտագործման համար կատարված ծախսերը:

Ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ դրանց օգտակար ծառայության ընթացքում.

Տիպ	Օգտակար ծառայության ժամկետներ
Ծրագրային լիցենզիաներ	10 տարի

Արժեզրկվելիս, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հետևյալ արժեքներից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

Հազ. ՀՀ դրամ	Ծրագրային լիցենզիաներ
Սկզբնական արժեքը առ 1 հունվարի 2022թ.	88,887
Կուտակված ամորտիզացիա առ 1 հունվարի 2022թ.	(84,957)
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2022թ.	**3,930**
Ամորտիզացիոն մասնահանում	(1,269)
Սկզբնական արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	88,887
Կուտակված ամորտիզացիա առ 31 դեկտեմբերի 2022թ.	(86,226)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**2,661**
Ավելացում	8,772
Ամորտիզացիոն մասնահանում	(442)
Սկզբնական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	97,659
Կուտակված ամորտիզացիա առ 31 դեկտեմբերի 2023թ.	(86,668)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	**10,991**

9 Պաշարներ

Պաշարներ Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով:

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Շահառուներին բաշխման ենթակա պաշարներ	11,114	10,948
Վառելիք	5,263	7,965
Այլ	489	694
Ընդամենը պաշարներ	**16,866**	**19,607**

10 Տրամադրված կանխավճարներ

Տրամադրված կանխավճարներ Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման գծով պահուստը: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Հիմնադրամը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ: Այլ կանխավճարները ծախսագրվում են Գործունեության մասին հաշվետվությունում կազմում, երբ կանխավճարի հետ կապված ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա Գործունեության մասին հաշվետվությունում: Տրված կանխավճարները ներառում են սկսնակ բիզնեսներին տրամադրված դրամաշնորհներ: Այդ գումարները վճարման պահին ճանաչվում են որպես կանխավճար, քանի որ բիզնեսը պետք է ստեղծվի և հաշվետու լինի Հիմնադրամին՝ պայմանագիրը ստորագրելուց հետո վեց ամսվա ընթացքում: Հաշվետվությունը ստանալուց հետո այդ գումարները ճանաչվում են որպես ծախս:

10 Տրամադրված կանխավճարներ (Շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Սկսնակ բիզնեսներին տրամադրված դրամաշնորհներ	9,214	18,608
Կանխավճար «SOS International»-ին	-	4,154
Շահառուներին տրամադրված դրամաշնորհներ	3,166	2,361
Կանխավճարներ աշխատակիցներին	746	3,499
Հարկերի կանխավճարներ	-	1,924
Կանխավճարներ հիմնական միջոցների ձեռքբերման գծով	-	1,575
Այլ կանխավճարներ -		7,288
Ընդամենը տրամադրված կանխավճարներ	**13,126**	**39,409**

11 Բանկերում պահվող ավանդներ

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ավանդներ – դրամական նվերներ	40,479	55,100
Ընդամենը բանկերում պահվող ավանդներ	**40,479**	**55,100**

Ժամկետային ավանդների սկզբնական մարման ժամկետը մեկ տարի է:

Ավանդների գծով ԱՊԿ-ն ոչ էական է:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկում ավանդը կապված է Երեխաներին դրամական նվերներ ծրագրի հետ, այդ ծրագրի պայմանների համաձայն այդ գումարի օգտագործումը սահմանափակված է Հիմնադրամը կարող է ավանդը օգտագործել միայն «Դրամական նվերներ երեխաներին» ծրագրի համար: Այս ծրագրի մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 13-ում:

Ավանդը արտահայտված է ԱՄՆ դոլարով և կազմում է 100,000 ԱՄՆ դոլար, տարեկան 2.3% տոկոսադրույքով: (2022թ. դեկտեմբերի 31-ին՝«Դրամական նվիրատվություններ երեխաներին» ծրագրի համար նախատեսված ավանդը կազմում է 140,000 ԱՄՆ դոլար՝ տարեկան 2.6%) տոկոսադրույքով:

Ստորև բերված աղյուսակը բացահայտում է Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների վարկային որակը՝ հիմնված վարկային ռիսկի աստիճանների վրա

Հազ. ՀՀ դրամ	Բանկային ավանդներ 31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
S&P Գլոբալ վարկանիշ B+	40,479	55,100

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Բանկերում պահվող դրամական միջոցներ	237,437	384,004
Դրամական միջոցներ դրամարկղում	-	211
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**237,437**	**384,215**

Արտարժույթով արտահայտված դրամական միջոցների և դրանց համարժեքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Դրամական նվիրատվություններ երեխաներին» ծրագրի ընթացիկ հաշվի մնացորդը կազմել է 6,748 հազ. ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,156 հազ. ՀՀ դրամ):
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Բնակարանային ապահովում» ծրագրի ընթացիկ հաշվի մնացորդը կազմել է 7,681 հազ. ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,442 հազ. ՀՀ դրամ):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ԱՊԿ-ն ոչ էական է:

	Բանկերում պահվող դրամական միջոցներ	
Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
S&P Գլոբալ վարկանիշ B+	237,437	384,004

13 Հավատարմագրային ֆոնդում պահվող միջոցներ

Հավատարմագրային ֆոնդում պահվող միջոցներ «UOU մանկական գյուղեր» միջազգային կազմակերպությունն իրականացնում է Միջազգային հովանավորչական ծրագիր: Այս ծրագրի շրջանակներում տարբեր երկրների հովանավորներ պարտավոր են վճարել հովանավորչական հատկացումներ, որոնք նախատեսված են հովանավորման վայրում գտնվող UOU մանկական գյուղի (ներառյալ UOU ընտանեկան խնամքի և բոլոր այլ միավորների) ընթացիկ ծախսերը հոգալու համար: Բացի հովանավորչական հատկացումներից, հովանավորների կողմից կազմակերպությանն ուղղված ոչ պարտադիր նվիրատվություններ են երեխաներին տրամադրվող դրամական նվերները, որոնք նախատեսված են կոնկրետ երեխայի համար օգտագործվելու նպատակով:

Հավատարմագրային ֆոնդում պահվող միջոցները իրենցից ներկայացնում են հիմնադրամին պահառության տրված կանխավճարներ, որոնք հետագայում պետք է օգտագործվեն որոշակի նպատակով: Հիմնադրամը հանդես է գալիս որպես հոգաբարձու, այլ ոչ՝ շահառու: Երեխաների դրամական նվերները պահվում են կոլեկտիվ բանկային ավանդում և ընթացիկ հաշիվներում, և անհատապես յուրաքանչյուր երեխայի համար կատարվում է դրամական նվերների հաշվառում: Դրամական նվերները հասցեագրված են են «UOU մանկական գյուղեր»-ում հյուրընկալող առանձին երեխաների անունով:

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Դրամական նվերներ	47,227	58,395
Ընդամենը հավատարմագրային ֆոնդում պահվող միջոցներ	**47,227**	**58,395**

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս երեխաների դրամական նվերների գծով պարտավորությունների շարժը:

Հազ. ՀՀ դրամ	**2023**	**2022թ.**
Մնացորդն առ 1 հունվարի	**58,395**	**71,248**
Տարվա ընթացքում ստացված դրամական նվերներ	2,533	5,049
Տարվա ընթացքում հատկացված դրամական նվերներ	(16,173)	(6,594)
Փոխարժեքի ազդեցությունը	1,110	(12,884)
Վաստակած տոկոսներ	1,362	1,576
Մնացորդն առ 31 դեկտեմբերի	**47,227**	**58,395**

Երեխաների դրամական նվերների գծով մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ. կազմել է 116,671 ԱՄՆ դոլար (համարժեք՝ 47,227 հազ. ՀՀ դրամի), առ 31 դեկտեմբերի 2022թ. կազմել է 148,373 ԱՄՆ դոլար (համարժեք՝ 58,395 հազ. ՀՀ դրամի):

14 Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ

Հետաշխատանքային հատուցումներ . Կենսաթոշակային պարտավորությունների ներկա արժեքը կախված է մի շարք գործոններից, որոնք որոշվում են ակտուարային հիմունքներով՝ օգտագործելով մի շարք ենթադրություններ: Կենսաթոշակների զուտ արժեքը (եկամուտը) որոշելու համար օգտագործվող ենթադրությունները ներառում են զեղչման դրույքաչափը: Այս ենթադրությունների ցանկացած փոփոխություն կազդի կենսաթոշակային պարտավորությունների հաշվեկշռային արժեքի վրա: Հիմնադրամը յուրաքանչյուր տարվա վերջում որոշում է համապատասխան զեղչի դրույքաչափը: Սա այն տոկոսադրույքն է, որը պետք է օգտագործվի՝ որոշելու ապագա դրամական միջոցների գնահատված արտահոսքերի ներկա արժեքը, որոնք ակնկալվում են, որ կպահանջվեն կենսաթոշակային պարտավորությունները մարելու համար: Համապատասխան զեղչի դրույքաչափը որոշելիս Հիմնադրամը հաշվի է առնում բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի տոկոսադրույքները՝ արտահայտված այն արժույթով, որով վճարվելու են հատուցումները և ունեն մարման ժամկետներ, որոնք մոտ են համապատասխան կենսաթոշակային պարտավորության ժամկետներին:

Կենսաթոշակային պարտավորությունների գծով այլ հիմնական ենթադրությունները մասամբ հիմնված են ընթացիկ շուկայական պայմանների վրա:

Հիմնադրամի սահմանված հատուցումների պլանների համաձայն՝ կենսաթոշակային նպաստի չափը, որը աշխատողը կստանա կենսաթոշակի անցնելու ժամանակ, սահմանվում է՝ հաշվի առնելով աշխատողի ստաժը և վերջնական աշխատավարձը: Ցանկացած հատուցումների իրավական պարտավորությունը մնում է Հիմնադրամի վրա, նույնիսկ եթե սահմանված հատուցումների պլանի ֆինանսավորման համար նախատեսված են համապատասխան պլանային ակտիվներ: Պլանային ակտիվները կարող են ներառել ակտիվներ, որոնք հատուկ նախատեսված են երկարաժամկետ նպաստների հիմնադրամի համար, ինչպես նաև համապատասխանող ապահովագրական պայմանագրեր: Սահմանված հատուցումների պլանների ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված պարտավորությունը հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված հատուցումների պարտավորության (ՍՀՊ) ներկա արժեքն է՝ հանած պլանային ակտիվների իրական արժեքը:

Ղեկավարությունը տարեկան գնահատում է ՍՀՊ-ն անկախ ակտուարների օգնությամբ: Այն հիմնված է գնաճի, աշխատավարձի աճի և մահացության ստանդարտ տեմպերի վրա: Զեղչման գործակիցները որոշվում են յուրաքանչյուր տարվա վերջի մոտ՝ հղում անելով միջնաժամկետ պետական պարտատոմսերին, որոնք արտահայտված են արժույթով, որով վճարվելու են հատուցումները և ունեն մարման ժամկետներ, որոնք մոտ են համապատասխան կենսաթոշակային պարտավորության ժամկետներին: Հիմնադրամի սահմանված հատուցումների պլանի ծառայությունների արժեքը ներառված է աշխատակիցների հատուցումների ծախսում: Աշխատակիցների վճարումները, որոնք բոլորն էլ անկախ են աշխատանքային ստաժի տևողությունից, դիտվում են որպես ծառայության արժեքի նվազեցում: Սահմանված հատուցումների զուտ պարտավորության գծով զուտ տոկոսային ծախսերը ներառված են ֆինանսական ծախսերում: Սահմանված հատուցումների զուտ պարտավորության վերաչափումներից առաջացող օգուտները և վնասները ներառված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և չեն վերադասակարգվում հետագա ժամանակաշրջաններում կուտակված արդյունքների մեջ:

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Կենսաթոշակային նպաստներ		
Երկարաժամկետ մաս	130,347	147,564
Կարճաժամկետ մաս	17,298	14,691
Ընդամենը հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	**147,645**	**162,255**

14 Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հետաշխատանքային նպաստների պարտավորությունների շարժը:

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Մնացորդն առ 1 հունվարի	**162,255**	**172,309**
Սպասարկման ծախս	1,488	2,471
Տոկոսային ծախս	14,738	13,681
Փաստացի վճարում	(17,298)	(14,691)
Ակտուարային օգուտ	(13,538)	(11,515)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի	**147,645**	**162,255**

Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորությունները ներառում են լրիվ կենսաթոշակային նպաստներ գյուղում ապրող UOU մայրերի և մորաքույրների համար, որը համարժեք է վերջնական աշխատավարձի 60%-ին իրենց կյանքի մնացած ողջ տևողության ընթացքում:

Լրիվ կենսաթոշակային նպաստի ստացման իրավունքի համար անհրաժեշտ պայմանները.
- 15 տարի շարունակ անընդմեջ աշխատելը որպես «UOU» մայր կամ մորաքույր,
- Նորմալ կենսաթոշակային տարիքի լրանալը,
- Թոշակի անցնելիս «UOU»-ում աշխատելու փաստը

15 Ստացված շնորհներ

Ստացված շնորհներ և եկամուտ նվիրատվություններից: Ստացված շնորհները ճանաչվում են իրենց իրական արժեքով, եթե կա ողջամիտ երաշխիք, որ շնորհը կստացվի, և Հիմնադրամը կհամապատասխանի բոլոր կից պայմաններին:

Հիմնական միջոցների ձեռքբերմանն առնչվող շնորհները ներառված են ոչ ընթացիկ պարտավորությունների մեջ որպես հետաձգված եկամուտ և հաշվեգրվում են շահույթում կամ վնասում գծային հիմունքներով՝ ակտիվների սպասվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ծախսերին վերաբերող շնորհները հետաձգվում և ճանաչվում են տարվա շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանի ընթացքում, որն անհրաժեշտ է՝ դրանք փոխհատուցելու համար նախատեսված ծախսերին համապատասխանեցնելու նպատակով:

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազ. ՀՀ դրամ	**2023**	**2022թ.**
Ակտիվներին վերաբերող շնորհներ առ 1 հունվարի	**20,310**	**4,617**
Ստացված նոր դրամաշնորհներ	9,071	16,303
Հետաձգված եկամտի ամորտիզացիա՝ հարակից մաշվածությանը համապատասխանեցնելու համար	(3,584)	(610)
Ակտիվներին վերաբերող շնորհներ առ 31 դեկտեմբերի	**25,797**	**20,310**

Եկամտին վերաբերող շնորհներ

Հազ. ՀՀ դրամ	**2023**	**2022թ.**
Եկամուտներին վերաբերող շնորհներ առ 1 հունվարի	**214,687**	**116,755**
Ստացված նոր դրամաշնորհներ	326,551	543,386
Ճանաչված եկամուտ	(469,031)	(445,454)
Եկամուտներին վերաբերող շնորհներ առ 31 դեկտեմբերի	**72,207**	**214,687**
Դրամաշնորհներ առ 31 դեկտեմբերի	**98,004**	**234,997**

Եկամտին վերաբերող շնորհները ներառում են եվրոյով նվիրաբերված մեկ դրամաշնորհ, որի ընդհանուր գումարը 2023թ. դեկտեմբերի 31-ին կազմում է 33,117 եվրո (33,117 հազ. ՀՀ դրամին համարժեք դրամ) և ՀՀ դրամով նվիրաբերված մեկ դրամաշնորհ, որի ընդհանուր գումարը 2023թ. դեկտեմբերի 31-ին կազմում է 15,533 հազ. ՀՀ դրամին համարժեք դրամ (2022թ.դեկտեմբերի 31-ին՝ 159,552 եվրո (67,052 հազ. ՀՀ դրամին համարժեք դրամ):

16 Պարտավորություններ շահառուների նկատմամբ

Պարտավորություններ շահառուների նկատմամբ. ՍՕՍ-Բնակարանային ապահովման ծրագրի շահառուներ. Հիմնադրամն իրականացնում է մասամբ անկախ փուլում իր խնամքի տակ գտնվող երեխաներին բնակարանային ապահովման ծրագիր: Ծրագիրը հասանելի է երեխաներին՝ ինչպես Հիմնադրամի կողմից խնամքի տակ գտնվելու ժամանակահատվածում, այնպես էլ այդ ժամանակահատվածից հետո ցանկացած ժամանակաշրջանում (այսինքն՝ Հիմնադրամի սաների համար): Ծրագրի իրականացումը ենթադրում է երիտասարդության և հիմնադրամի համաֆինանսավորմամբ բնակելի տարածքների ձեռքբերում: Հիմնադրամը ֆինանսավորում է բնակելի տարածքի արժեքի մինչև 70%-ը, իսկ մնացածը վճարում են երիտասարդները: Ծրագրի ներքո չեն նախատեսված որևէ միջոցներ ծրագրի համար որպես ամբողջություն կամ յուրաքանչյուր տարվա համար, հետևաբար դա Հիմնադրամի համար որևէ իրավական պարտավորություն չի ստեղծում: Բնակելի տարածք ձեռք բերելու յուրաքանչյուր որոշում կայացվում է Հիմնադրամի ղեկավարության կողմից. Նման որոշումները հիմնված են մի քանի գործոնների վրա, ներառյալ միջոցների առկայությունը (ինչպես ստացողից, այնպես էլ հիմնադրամից), ստացողի համար բնակելի տարածքի անհրաժեշտության հիմնավորված փաստը, ընտրված բնակելի տարածքների համապատասխանության ապահովումը ծրագրի կողմից նախատեսված պայմանների և կանոնների հետ: Ծրագրի իրականացման համար Հիմնադրամը սովորաբար յուրաքանչյուր տարվա համար նախատեսում է 5,000 հազ. ՀՀ դրամ բյուջե: Եթե ձեռքբերումը չի կատարվել մեկ տարվա ընթացքում կամ կատարվել է բյուջեով նախատեսված գումարից պակաս գումարով, ապա խնայողությունները կարող են օգտագործվել հաջորդ տարիներին մյուս երիտասարդ շահառուին բնակարանով ապահովելու համար: Մեկ բնակելի տարածքի ձեռքբերման ուղղությամբ Հիմնադրամի ներդրումը չի կարող գերազանցել 5,000 հազ. ՀՀ դրամը: Երիտասարդները սովորաբար իրենց ներդրումները կուտակում են Հիմնադրամում, որն էլ իր հերթին միջոցները դնում է առանձին բանկային հաշվի վրա: Երիտասարդների կողմից կուտակված միջոցները հիմնականում գոյանում են Հիմնադրամի կողմից նրանց ամենօրյա ծախսերի համար տրամադրվող ֆինանսական օգնության միջոցների խնայումներից: Երիտասարդները կարող են ծրագրի համար միջոցներ կուտակել նաև Հիմնադրամից դուրս: Ելնելով ծրագրի պայմաններից՝ Հիմնադրամը չունի որևէ իրավական կամ կառուցողական պարտավորություն երիտասարդների նկատմամբ և իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում համապատասխան պարտավորությունները արտացոլում է երիտասարդներից ծրագրային նպատակներով փաստացի դրամական մուտքերի չափով, մինչև այն ժամանակ, երբ այդ միջոցները ծախսվեն բնակելի տարածքների ձեռքբերման նպատակով:

ՍՕՍ-Բնակարանային ապահովման ծրագիրը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում է 2,196 հազ. ՀՀ դրամի պարտավորություններ 5 ՍՕՍ անկախ ապրող երիտասարդի և կիսաանկախ ապրող երիտասարդի նկատմամբ (2022թ.՝ 3,306 հազ. ՀՀ դրամ՝ 8 երիտասարդի համար) և պահուստ բնակարանային ապահովման ծրագրի գծով՝ 6,150 հազ. ՀՀ դրամի չափով (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 6,142 հազ.): 2023թ. մեկ երիտասարդի բնակարանային ապահովման գծով աջակցություն է իրականացվել 4,998 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով (2022թ.՝ մեկ երիտասարդի՝ 5,000 հազ. ՀՀ դրամ):

Երեխայի նպաստի խնայողություններ. Սրանք այն միջոցների խնայողություններն են, որոնք Հիմնադրամը տրամադրում է Հիմնադրամի խնամքի ներքո գտնվող երիտասարդներին իրենց ամենօրյա ծախսերի համար: Այդ գումարները պահվում են յուրաքանչյուր երիտասարդի անձնական քարտում որպես պարտավորություն, որը ենթակա է վճարման նրանց ըստ պահանջի:

2023թ. դեկտեմբերի 31-ին Երեխայի նպաստի խնայողությունները ներառում են պարտավորություններ 37 ՍՕՍ երիտասարդների նկատմամբ (2022թ.՝ 52 ՍՕՍ երիտասարդների նկատմամբ):

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Բնակարանային ապահովման ծրագիր	8,347	9,449
Երեխայի նպաստի խնայողություններ	3,236	7,007
Ընդամենը պարտավորություններ շահառուների նկատմամբ	**11,583**	**16,456**

17 Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Ամենամյա արձակուրդների չօգտագործված օրեր	38,361	37,101
Այլ պարտավորություններ	11,084	-
Ընդամենը հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	**49,445**	**37,101**

18 Եկամուտ նվիրատվություններից

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.** Առանց սահմանափակման	Սահմանափակված	Ընդամենը	**2022թ.** Առանց սահմանափակման	Սահմանափակված	Ընդամենը
Եկամուտ «SOS International»-ից	1,547,741	401,733	**1,949,474**	1,875,729	384,278	**2,260,007**
Եկամուտներ դրամահավաքից և բնաիրային նվիրատվություններից	78,040	-	**78,040**	132,680	-	**132,680**
Եկամուտներ պետական սուբսիդիաներից և դրամաշնորհներից	79	67,298	**67,377**	-	32,273	**32,273**
Ընդամենը եկամուտ նվիրատվություններից	**1,625,860**	**469,031**	**2,094,891**	**2,008,409**	**416,551**	**2,424,960**

19 Ծրագրի/նախագծի ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Շահառուներին տրամադրված ակտիվներ և ծառայություններ		
Շահառուներին տրամադրված պաշարներ	247,470	369,009
Շահառուներին դրամական միջոցների տրամադրում	164,507	174,574
Հոգե-սոցիալական ծառայություններ	59,670	33,639
Շահառուներին վարձավճարի փոխհատուցում	52,998	43,512
Կրթական ծառայություններ և վերապատրաստման վճարներ	48,308	60,561
Ամառային ճամբար	37,641	37,550
Դեղորայք և բժշկական ծառայություններ	21,144	37,657
Շահառուներին տրամադրված ակտիվներ և ծառայություններ	**631,738**	**756,502**
Անձնակազմի գծով ծախսեր	808,614	858,194
Մաշվածություն և ամորտիզացիա	109,173	115,113
Վերանորոգում և սպասարկում	58,651	52,552
Հասարակայնության հետ կապերի ծախսեր	46,779	16,412
Այլ ծախսեր	38,886	27,072
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	29,727	32,090
Օգտագործված պաշարներ	29,718	36,741
Ապահովագրության ծախսեր	19,184	18,735
Վերապատրաստման ծախսեր	17,359	10,737
Մասնագիտական ծառայություններ	13,798	2,410
Կոմունալ ծախսեր	7,866	9,362
Իրավաբանական ծառայություններ	3,617	3,165
Ընդամենը ծրագրի/նախագծի ծախսեր	**1,815,110**	**1,939,085**

20 Վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2023**	**2022թ.**
Անձնակազմի գծով ծախսեր	147,572	136,386
Անդամավճարներ	82,047	122,520
Վերանորոգում և սպասարկում	23,161	27,242
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	18,149	15,356
Այլ ծախսեր	17,311	4,785
Օգտագործված պաշարներ	13,721	3,450
Մաշվածություն և ամորտիզացիա	13,172	13,731
Մասնագիտական ծառայություններ	12,267	11,737
Վերապատրաստման ծախսեր	10,343	13,148
Կոմունալ ծախսեր	5,435	4,670
Հասարակայնության հետ կապերի ծախսեր	3,197	7,766
Ապահովագրության ծախսեր	1,814	1,791
Ընդամենը վարչական ծախսեր	**348,189**	**362,582**

21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ բնականոն գործունեության ընթացքում Հիմնադրամի դեմ կարող են ներկայացվել հայցեր: Հիմնվելով սեփական գնահատման վրա, ղեկավարությունը կարծում է, որ դրանք չեն հանգեցնի էական կորուստների, որոնք կգերազանցեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված պահուստների գումարը:

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի դեմ դատական հայցեր առկա չեն եղել:

Հարկային պայմանական պարտավորություններ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը ենթակա են վերանայման և հետաքննության հարկային մարմինների կողմից, որոնք տուգանքներ և տույժեր կիրառելու իրավասություն ունեն:

Այս փաստերը կարող են զգալիորեն ավելի շատ հարկային ռիսկեր ստեղծել Հայաստանում՝ այլ զարգացած երկրների համեմատ: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Հիմնադրամը ենթարկվում է ֆինանսական գործիքների հետ կապված տարբեր ռիսկերի: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Շուկայական ռիսկ. Հիմնադրամը ենթակա է շուկայական ռիսկերի ազդեցության: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Ղեկավարությունը սահմանում է ռիսկի այն մակարդակը, որը կարող է ընդունվել, ինչն էլ վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերը գերազանցող վնասների առաջացումը՝ ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր տեղի ունենալու դեպքում:

Արժութային ռիսկ. Արժութային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ՝ ինչպես շուրջօրյա, այնպես էլ օրական դիրքերի գծով, որոնք վերահսկվում են ամենօրյա հիմունքով:

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակը ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում Հիմնադրամի արտարժույթի փոխարժեքի ռիսկի ենթարկվածությունը.

	Առ 31 դեկտեմբերի 2023թ.			Առ 31 դեկտեմբերի 2022թ.		
Հազ. ՀՀ դրամ	Դրամական ֆինանսա-կան ակտիվներ	Դրամական ֆինանսա-կան պարտավո-րություններ	Զուտ դիրք	Դրամական ֆինանսա-կան ակտիվներ	Դրամական ֆինանսա-կան պարտավո-րություններ	Զուտ դիրք
ԱՄՆ դոլար	54,145	47,227	6,918	61,052	58,396	2,656
Եվրո	31,647	-	31,647	46,760	-	46,760
Ընդամենը	**85,792**	**47,227**	**38,565**	**107,812**	**58,396**	**49,416**

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի և վնասի և սեփական կապիտալի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

	Առ 31 դեկտեմբերի 2023թ.		Առ 31 դեկտեմբերի 2022թ.	
Հազ. ՀՀ դրամ	Ազդեցությունը գործունեության մասին հաշվետվության վրա	Ազդեցությունը զուտ ակտիվների վրա	Ազդեցությունը գործունեության մասին հաշվետվության վրա	Ազդեցությունը զուտ ակտիվների վրա
ԱՄՆ դոլարի արժևորում 20%-ով	1,384	1,384	531	531
ԱՄՆ դոլարի անկում 20%-ով	(1,384)	(1,384)	(531)	(531)
Եվրոյի արժևորում 20%-ով	6,329	6,329	9,352	9,352
Եվրոյի անկում 20%-ով	(6,329)	(6,329)	(9,352)	(9,352)

Տոկոսադրույքի ռիսկ. Հիմնադրամը չի ենթարկվում այս ռիսկին, քանի որ այն չունի այլ տոկոսաբեր ակտիվներ և պարտավորություններ, բացի Ծանոթագրություն 12-ում ներկայացված բանկային ավանդից, իսկ բանկային ավանդներն ունեն ֆիքսված տոկոսադրույքներ:

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկ՝ նշանակում է, որ կազմակերպությունը կարող է դժվարանալ կատարելու պարտականությունները ֆինանսական պարտավորությունների գծով: Հիմնադրամը օրական կտրվածքով առնչվում է դրամական միջոցների պահանջների: Իրացվելիության ռիսկը կառավարվում է Հիմնադրամի ղեկավարության և UOU միջազգային գանձապետարանի կողմից: Ղեկավարությունը վերահսկում է Հիմնադրամի դրամական հոսքերի ամսական շարժի կանխատեսումները:

Հիմնադրամի իրացվելիության պորտֆելը ներառում է դրամական միջոցները և դրանց համարժեքները (Ծանոթագրություն 12) ներդրումները ավանդներում (Ծանոթագրություն 11) : Ըստ ղեկավարության գնահատման՝ իրացվելիության փաթեթի դրամական միջոցները և բանկային ավանդները կարող են մեկ օրվա ընթացքում վերածվել կանխիկի՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջը բավարարելու համար:

Հիմնադրամի ղեկավարությունը և «SOS International»-ի գանձապետական բաժինը վերահսկում է իրացվելիության դիրքը և պարբերաբար իրականացնում է իրացվելիության սթրես-թեստ՝ օգտագործելով ինչպես բնականոն, այնպես էլ առավել խիստ շուկայական պայմաններ ներառող սցենարներ:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը. Ժամկետայնության վերլուծության աղյուսակում բացահայտված գումարները պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքերն են:

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Այն դեպքերում, երբ վճարվող գումարը ֆիքսված չէ, աղյուսակում նշված արժեքը որոշվում է՝ ելնելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմաններից: Արտարժույթով վճարները փոխարկվում են՝ օգտագործելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սփոթ փոխարժեքը:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	12 ամիս – 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Պարտավորություններ						
Ստացված շնորհներ	32,668	65,336	-	-	-	**98,004**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,230	-	-	-	-	**5,230**
Պարտավորություններ շահառուների նկատմամբ	11,583	-	-	-	-	**11,583**
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	49,445	-	-	-	-	**49,445**
Հավատարմագրային ֆոնդում պահվող միջոցներ	25,071	-	-	16,202	5,956	**47,229**
Ընդամենը ապագա վճարումներ	**123,997**	**65,336**	**-**	**16,202**	**5,956**	**211,491**

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	12 ամիս – 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Պարտավորություններ						
Ստացված շնորհներ	78,332	156,665	-	-	-	**234,997**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,178	-	-	-	-	**4,178**
Պարտավորություններ շահառուների նկատմամբ	16,456	-	-	-	-	**16,456**
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	37,101	-	-	-	-	**37,101**
Հավատարմագրային ֆոնդում պահվող միջոցներ	24,729	-	-	18,200	6,530	**49,459**
Ընդամենը ապագա վճարումներ	**160,796**	**156,665**	**-**	**18,200**	**6,530**	**342,191**

23 Իրական արժեքի բացահայտումներ

Իրական արժեքի չափման վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող (չճշգրտվող) գներով, (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (օրինակ՝ գներ) կամ անուղղակիորեն (օրինակ՝ գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Ֆինանսական գործիքները իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակին վերագրելիս՝ ղեկավարությունը կիրառում է դատողություն Եթե իրական արժեքի չափման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի տվյալներ, ապա իրական արժեքի տվյալ չափումը վերաբերում է մակարդակ 3-ին: Օգտագործվող տվյալների նշանակալիությունը գնահատվում է իրական արժեքով չափվող ամբողջության համար:

23 Իրական արժեքի բացահայտումներ (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն ընթացիկ տոկոսադրույքներով համանման վարկային ռիսկեր ունեցող և մնացորդային մարման ժամկետներով նոր գործիքների դեպքում: Օգտագործված զեղչային դրույքաչափերը կախված են գործընկերոջ վարկային ռիսկից:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ: Այլ պարտավորությունների իրական արժեքները որոշվել են գնահատման մեթոդների կիրառմամբ: Նշված մարման ժամկետներով ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը գնահատվել է համանման վարկային ռիսկերով և մնացորդային ժամկետներով նոր գործիքների համար ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ զեղչված ընթացիկ տոկոսադրույքներով:

24 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսատնտեսական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ին Հիմնադրամը չի ունեցել չմարված մնացորդներ փոխկապակցված կողմերի հետ:

Փոխկապակցված կողմերի գծով եկամուտների և ծախսերի հոդվածները, 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Համատեղ վերահսկվող ընկերություններ**	
	2023թ.	**2022թ.**
Եկամուտ ՍՕՍ ընկերակցություններից ստացված նվիրատվություններից	**1,949,474**	**2,260,007**

Հիմնական ղեկավար անձնակազմի հատուցում. Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է Ազգային տնօրենին, հոգաբարձուների խորհրդի անդամներին, ֆինանսական բաժնի ղեկավարին.

	2023թ.		**2022թ.**	
Հազ. ՀՀ դրամ	**Ծախս**	**Հաշեգրված պարտավո-րություն**	**Ծախս**	**Հաշեգրված պարտավո-րություն**
Կարճաժամկետ հատուցումներ.				
- Աշխատավարձեր	31,259	1,263	32,718	1,663
Ընդամենը հատուցում առանցքային ղեկավար անձնակազմին	**31,259**	**1,263**	**32,718**	**1,663**

25 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չի ունեցել որևէ էական իրադարձություն, որը պետք է բացահայտվի այս հաշվետվության մեջ: